Պարույր Սևակ

Առանց աստառի

Ես ուրախության գործակատար եմ
Եվ խոր խնդության վաճառորդ եմ ես,
Բաց կրպակ ունեմ առողջ ծիծաղի
Ու ժպիտների կիսափակ խանութ:
Եվ երջանկության հաղորդիչներ են
Իմ զույգ ափերը
Ու մատներն իմ տաս:
Բերանըս սիրո մի սերտարան է,
Իմ զույգ ոտները՝
Ժամադրրավայր տանող ինքնաշարժ,
Իսկ իմ թևերը՝
Գիրկ ու խտիտի խելացի գործիք:
Կուրծքըս պաստառ է շքանշանի,
Եվ շքանշա՛ն, որ կոչվում է սի՜րտ,
Եվ որ պաստառի ներսից են կրում...
Այսքանից հետո՝
Էլ ի՞նչ կարիք կա,
Էլ ինչո՞ւ եմ ես ինքըս իմ մասին
Ինչ-որ չափածո տեղեկանք գրում:
Աշխարհին ուղղված մի բացիկ եմ ես.
Մի՛ ծրարեք ինձ

Եվ մի՛ սոսրնձեք...

19.XI.1959թ.
Չանախչի